

Միսաք Գօշունեանի (Քասիմ) «Կրակին մէջէն» վեպը¹

1896-ին «Բանկ Օտոման» գործողության պատմական իրադարձությունը մեկ անգամ չէ, որ վերածվել է գեղարվեստական վավերացման:² Այսօր ահա հրապարակի վրա է Միսաք Գօշունեանի (Քասիմ) «Կրակին մէջէն» (Վեպ ազգային ընկերական կյանքէ)³ ծրագրային թերթոն-վեպի առաջին ամբողջական հրատարակությունը՝ գրականագետ Սեւան Տէյիրմէնճեանի առաջաբանով, ընդարձակ ու հանգամանալից ծանոթագրություններով, Զապել Եսայեանի «Գնունի» հավելվածով:

«Կրակին մէջէն» վեպի իրողությունը, հիրավի, այսօր բացառիկ է այն իմաստով, որ Գօշունեանը, որպէս ականատես, գեղարվեստական վավերականության է վերածում պատմական մի իրադարձություն՝ հետագա իր բոլոր հետևանքներով՝ դրանք միաժամանակ զուգորդելով հասարակական կյանքի մի շարք խնդիրների հետ՝ կնոջ ազատ ընտրության հարցը Նարդիկի կերպարով, հայ վաճառականության ու արհեստավորության դասի՝ ներքին շուկայում ձեռքբերումների, արտաքին շուկայի հետ կապեր ստեղծելու և հաստատելու վճռականությամբ՝ ոսկերիչ Գաբրիել աղա Բարիսեանի և ժամագործ Միհրդատ Արեւեանի կերպարներով, տարբեր ազգերի ներկայացուցիչների ներկայությամբ ցուցադրելով նրանց ազգային հոգեկերտվածքն ու կենցաղը ոճրագործների բանտի ընդարձակ հատվածներում, ինչպէս նաև առհասարակ թուրք իրականության բարոյական նկարագիրը, որ վեպի էջերում վերաճում է Օսմանյան պետության նկարագրի ընդհանրացման և այլն:

Վեպը բաղկացած է 11 հատվածից, իսկ սյուժետային հոսքը պայմանականորեն կարելի է դասակարգել ժամանակային 3 տիրույթում՝ «Բանկ Օտոման» գործողության կազմակերպման նախապատրաստական աշխատանքները, «Բանկ Օտոման» գործողության իրականացումը և նրան հաջորդած հայերի ջարդերն ու հալածանքները կառավարության հովանավորությամբ, իսկ գործողությունների դիպաշարը հյուսված է այն հիմնական մտքի շուրջ, թե՛ «... հայ ըլլալ ու բանտ չերթալ անկարելի էր...» (էջ 314):

Գաբրիել աղա Բարիսեանը, «Գումգաբուի հայկական դեպքերից» հետո, հաճախ էր իր հարկի ներքո «երեկույթներ» կազմակերպում, ուր, սակայն, հիմնական խոսակցության նյութն ազգային կյանքն էր, «արգիլուած լրագիրներու» ընթերցումը:

Գաբրիել աղան, որ վեհերոտ մարդ էր, անզգուշություն էր ունեցել իր տանը հյուրընկալելու և ճաշ մատուցելու ի պատիվ հայտնի հեղափոխական, վաղուց թուրքական ոստիկանության կողմից հետապնդվող Գնունուն, ինչը չի վրիպում թաղական հսկիչ ոստիկանի քննախույզ աչքից: Այդ հավաքույթների ոգին ու «զարդը կը կազմեր» բազմակողմանի զարգացած ու հայրենասիրական կրթություն ստացած դուստրը՝ Նարդիկը: Վերջինիս սիրտը վաղուց պատկանում էր ժամագործ Միհրդատ Արեւեանին, և, թվում է, աներկբա էր հետագա համատեղ կյանքի ու երջանկության հեռանկարը: Սակայն Արեւեանի մրցակիցը՝ Արշակ Տանիքեանը, չհանդուրժելով ապահով կյանքի հեռանկարի կորուստն ի դեմս Նարդիկի, տուրք է տալիս անձնական մղումներին և մատնության նամակ գրում թուրքական ոստիկանությանը, թե Արեւեանը Ժնև է գնում ոչ թե գործնական-առևտրային ծրագրերով, այլ տեղի «հայ անիծապարտ խռովարարներու խումբին» հետ հանդիպելու, և շատ հավանական է, որ վերադառնա հեղափոխական գաղափարներով տոգորված: Այստեղ հարկ ենք համարում հավելել, որ Գօչունեանը Երվանդ Օտյանի «Թիւ 17 խաֆիեն» վեպից առաջ է բարձրաձայել հայ լրտեսների ու նրանց դավադիր նկարագրի վերաբերյալ:

Արեւեանի ճամփորդության հեռանկարի խափանումը Գօչունեանը զուգահեռում է ազգային ազատագրական գաղափարներով տոգորված հեղափոխականների ու պատրիարքարանի ձեռնարկած ուղիների վիժեցմանը՝ այուժեի պատումի ընթացքի մեջ ներառելով նաև Պոլսում և գավառներում սկիզբ առած հայահալած քաղաքականության, բռնության, կաշառակերության, դավի, խարդավանքի, ազգային ու կրոնական հողի վրա ծայր առած խտրականության նկարագրությունները, երբ հայ սպանելը, կողոպտելը, բանտարկելը, «բարոյապէս, նիւթապէս եւ յաճախ ալ ֆիզիքապէս» հարստահարելը ոչ թե ոճրագործություն էր, այլ ծառայություն Օսմանյան կայսրությանը: Իսկ երբ լրտեսների, «խաֆիէների» տեղեկագրերը հայտնում են, թե Պոլսում «հայ յեղափոխականները անակնկալ յարձակում» են նախապատրաստում, բռնության ճիրաններն ավելի են սաստկանում:

Գօչունեանը փաստագրական ճշգրտությամբ է նկարագրում «Բանկ Օտոմանի» կազմակերպման և գրավման մանրամասները՝ միաժամանակ ակնարկելով արտասահմանյան որոշ երկրների դեսպանորդների «համակրանքն» ու «համագործակցությունը» հայ հեղափոխականների հետ. «...մէկ քանի օտար տէրութեանց Կ. Պոլսոյ դեսպանները լռելեայն ոյժ կու տային աչքառու ցոյցի մը

գաղափարին՝ բարոյապէս հաւաստելով, որ Կ. Պոլսոյ մէջ շփոթութիւն մը սկսելուն պէս իրենց նաւատորմերը պիտի մտցնեն Մարմարայի ջուրերը ու մէկ հարուածով պիտի լուծեն տարիներէ ի վեր ձգձգուած Հայկական խնդիրը» (էջ 90): Սակայն երբ գործողութիւնը ճնշելու նպատակով կառավարության սադրանքով սկիզբ է առնում կոտորածը, այդ նույն դեսպանորդները «...վճռական վայրկեանին՝ իրենց ապարանքները քաշուած՝ թուղթէ գնդակներ կ'արձակէին բռնապետական վարչութեան դէմ, տղայական նօթաներ ուղղելով Բ. Դուռ ու թող տալով, որ Պոլսոյ փողոցները ոռոգուէին հայու արիւնով» (էջ 97):

Գօշուներէն քննադատության սլաքներն ուղղված են ոչ այնքան ազգային հարցի՝ օտար տերութիւնների միջամտությամբ լուծելու միամիտ հավատին, որքան հայի բարոյահոգեբանական արատները ցուցադրելու, նեղ-անձնական շահը համընդհանուրից վեր դասելու, դրանց հետևանքներից դասեր քաղելու խնդրին: Այս իմաստով, հիրավի, վեպի գեղագիտական արժանիքներից ստեղծված վիճակից դուրս գալու հոգեբանական լուծումն է ըստ թուրք ոստիկանապետի՝ հայի դէմ հայի զենքով պայքարելու անակնկալ շրջադարձով. «Անխելութիւն է այսչափ լաւ զինուած մարդոց հետ մաքառելը: Պէտք է հայերը հանել իրենց դէմ: Հիմա իսկ անհրաժեշտ է գտնել տերութեան հաւատարմաբար ծառայողներէն մէկ քանի անձինք, որոնք իսկոյն կրնան համոզել իրենց ցեղակիցները» (էջ 109-110): Իսկ այդպիսիք կային՝ հայ փաստաբանը, որ գումար շորթելու անհագ ախորժակով «հանձն է առնում» բանտից ազատել Արշակ Տանիքեանի մատնագրով բանտարկված Միհրդատ Արեւեանին և Գաբրիել աղային և այլն:

Սկսվում է հայերի աննկարագրելի մի ջարդ: Հայ խռովարարները, որ նամակներ էին հղել Թուրքիայում հավատարմագրված եվրոպական երկրների դեսպանատներին հայկական հարցի վրա ուշադրություն բնեռելու և լուծելու նպատակով, հայրենակիցներին կոտորածից փրկելու համար ճարահատյալ ընդունում են Մաքսիմովի առաջարկությունը, թե նրանց կյանքին վտանգ չի սպառնա, եթե համաձայնվեն անցնել Եվրոպա: Իսկ կառավարությունը, քաջալերված այդ նույն Եվրոպայի անտարբերությունից, հայերի ոչնչացման նոր ծրագիր է մշակում՝ խռովարար հայերի (իսկ ամեն մի հայ անպատճառ խռովարար է) բանտարկման, խոշտանգման ու պարզապէս մահվան դատապարտման անբեկանելի վճռով:

Բանտը, ինչպես պարզվում է վեպի էջերից, սոսկ մի հաստատություն չէ, ուր հազարավոր կյանքեր են կործանվում, հույսեր մարում: Կարելի ասել՝ այն մի մասնավոր պատկեր է, որ մեզ թույլ է տալիս առավել լայն ընդհանրացում կատարելու. բանտ է Սամաթիան, բանտ է Պոլիսը, առհասարակ Օսմանյան կայսրությունը: Եվ հայերը օր առաջ բռնում են գաղթի ճանապարհը՝ հույս տաճելով, թե այսուհետ կկարողանան զերծ մնալ հետապնդումներից, լրտեսումներից ու, վերջապես, մահվան սպառնալիքից: Իսկ «ոճրագործների» բանտն իր «կենցաղով» ու առօրյայով մարմնավորում է ոչ միայն թուրք հասարակության ու իրականության, այլ նաև մի ամբողջ պետության բարոյականության նկարագիրը: Կաշառակեր է բանտի ամեն մի աշխատակից՝ սկսած դռնապանից մինչև բերդապահ, դատավորից մինչև ամենաբարձր պաշտոնյան: Գովում են, խաբում, ապա նորից շորթում և խաբում, և այդպես շարունակ ու անընդմեջ, ահա թե ինչու է Գօչունեանն իր ստեղծագործությունը վերնագրել «Կրակին մեջեն»՝ այն սոսկ մասնավորելով վեպի վերջին հատվածներում գլխավոր հերոսների անցած ճանապարհի ընդհանուր նկարագրությամբ (էջ 314): Հատկանշական է, որ վերջիններիս բանտարկությունը թեթևացնելու խնդրում իր դերն է կատարում ոսկին՝ կաշառքը, իսկ նրանց բանտարկությունից ազատվելու խնդիրը Գօչունեանը լուծում է Անգլիայի դեսպանի ու նրա կնոջ միջամտությամբ: Նարդիկը, որպես գործունյա և առաջադեմ գաղափարներով կրթված մի կին, մտերիմ էր տիկին դեսպանուհու ու նրա զավակների երաժշտության ֆրանսուհի ուսուցչուհու հետ: Ի վերջո, երբ այլևս ոսկին կորցնում է իր ուժը, միջամտում է «քաղաքակիթ Եվրոպան»: Եվ կրկին հարց է ծագում՝ մի՞թե գրողն էլ, այնուամենայնիվ, տուրք է տվել դրսից փրկություն ստանալու միամիտ հավատին...

Յուրօրինակ է Գօչունեանի ոճը: Նա հաճախ է պատումն ընդմիջում ընդարձակ ծանոթագրություններով ու դրանց անհրաժեշտության բացատրությամբ (էջ 58, 166 և այլն), պատմական դեմքերի անմիջական մասնակցությունը պլոտեին ներհյուսելով, տարբեր ազգերի (թուրք, քուրդ, հրեա, ռուս, ֆրանսիացի, անգլիացի, գերմանացի) վարքագծի նկարագրությամբ ու հայերի ջարդի ժամանակ նրանց դրսևորած բարոյական հատկանիշների ընդհանրացմամբ, բառախաղերի միջոցով գլխավոր կերպարների հոգեբանական վերլուծությամբ (Տանիքեան-Արեւեան), և, վերջապես, սիմվոլների համակարգով, որոնք, մեր կարծիքով ոչ այնքան հաջողված են, որքան

հետաքրքիր. «Ո՛հ, փունջը բարձրաբարձառ կը խօսի արդէն: Վեց մանիշակները հայկական վեց նահանգներն են, զայն շրջապատող կարմիր լեւակները այդ նահանգներուն ազատագրութեան համար նահատակուող քաջարի հայերը կը խորհրդանշեն, իսկ մէջտեղի սպիտակ քամէլիան, հա՛րկ է ըսել թէ Անգլիոյ դեսպանուհին կը յատկանշէ, որ այնչա՛փ բարեսրտութիւն ցոյց տուաւ հայ բանտարկեալներուն համար», - Նարդիկի՝ Անգլիայի դեսպանորդուհու ծննդյան տարեդարձի համար նախատեսված ծաղկեփունջն է մեկնաբանում ֆրանսուհի դաշնակահարուհին (էջ 186):

Գրեթէ արկածայնության երանգ է կրում բանտում Միհրդատի ծանոթությունը «գանտիլճի Մէհմէտի»՝ հավատափոխ եղած Ներսէսի հետ, ով, պատմելով իր կրոնափոխության պատճառն ու բանտարկության պատմությունը, պարզվում է՝ Գաբրիէլ աղային հորեղբոր թոռն է (էջ 278-297): Վեպի ուշագրավ հատվածներից է նաև Ճէմիլ փաշայի՝ անգլիայի նախկին հյուպատոսի՝ Հենտերսընի հետ կոնֆլիկտի մանրամասն նկարագրությունը, որ կարող է մի առանձին վեպի նյութ դառնալ. «Ամբողջ Հալեպի նահանգը լուռ հանդիսատես կ'ըլլար երկու տիտաններու մենամարտին,- ծաղրում է Գօչունեանը և, շարունակելով նրանց միջև ծագած թշնամանքի նախապատճառի նկարագրումը՝ հավելում,- ակնդէտ սպասելով, թէ որը որուն յաղթէ: Ի պատիւ երկուքին ալ պէտք է ըսել թէ էնթրիքներու եւ խարդաւանանքի մասին զիրար կը գերազանցէին...» (էջ 306): Ճէմիլ փաշայի պաշտոնանկության պատճառը քաջ հայտնի էր Շէֆիզ փաշային, ուստի «... կը զգուշանար անգլիացւոց հետ վեճի բռնուելէ» և, առանց երկմտելու ընդառաջ է գնում դեսպանի միջնորդությանը և հրաման արձակում ազատել Միհրդատին ու Գաբրիէլ աղային: Գրեթէ նույն նախապատմությունն ունի և «Գումգաբուի դէպքը» (էջ 25-26): Իրական պատմություններով այս ընդմիջումները մեկ անգամ ևս հավաստում են վեպի ծրագրային բնույթը: Ահա թէ ինչու գրողի՝ իր առջև դրված խնդիրների լուծման պարագան վեպը զրկում է գեղագիտական ու իմացաբանական լայն ոլորտ ընդգրկելու, կերպարների հոգեբանական ու պատմական մի ժամանակահատվածի նկարագրությանը զուգահեռ պատմափիլիսոփայական ընդհանրացումներ կատարելու հնարավորություններից: Այլ կերպ ասած՝ գեղագետ-գրողին հաղթում է վավերագիր-լրագրողը, ինչը և ժամանակի հրամայականն էր:

Ծանոթագրություններ

1. Միսաք Գօշունեան (Քասիմ) , «Կրակին մեջէն», Երեւան, Տիգրան Մեծ, 2010, 340 էջ:
2. Այս մասին տես Միսաք Գօշունեանի (Քասիմ), «Կրակին մեջէն», էջ 15-16:
3. «Ժամանակ», 19-12-1908: